

տակամբ ք յերկնից, աւետիս ուրախութեան մատուցանելով նոցա, երգէին, փառք ի բարձունս, ևւ այլն:»

«Վասն եփրաւս:»

«Ի սուրբ Բեթլեհէմէն Բ ժամու ճանապարհ զէպ ի հարաւ, գաանի Սողոմոն արքայի պարտիղի տեղն, որ չորից կողմանց փակեցեալ է լերամբ...: Եւ յայտ տեղոյս մղոնուկէս հեռի, զէպ յարեւմուտս, զոյ աղբիւր մի, որ ասի՝ աղբիւր կնքեալ, զի ի ներքոյ երկրի ընթանայ, ի մէջ կամարաշէն այրի միոջ, զայ յարեւմտից զընայ յարեւելս:»

«Եւ յայտ աղբերէս ընթացեալ զէպ ի հիւսիս, իրր կէս ժամու ճանապարհ, պատահի վանք մի՝ յանուն սրբոյն Գէորգայ զօրաւարին, ևւ ունի եկեղեցի գմբէթաշէն սքանչելագործ ի հիւանդս ևւ ի ցաւազնեալս, զի միշտ առնէ բժշկութիւն հիւանդաց, թէ հաւատացելոց ևւ թէ անհաւատից անխտիր: Եւ է ի ձեռս Յունաց ազգին: Եւ Քրիստոսի փառք յախտեանս. ամէն:» (Էջ 87ա.—)

«Այսօրքիկ ևւ որք գտանին ուխտատեղիք ի հարաւակողմն սրբոյն քաղաքին յերուսաղէմայ զոր Աստուծով պատմեցաք համառօտակի, վասն որոյ այսուհետեւ տեսցուք զհիւսիսային կողմի եղեալ տեղիքն:»

«Վասն ազարակին Ագրիպպա ուր ննջեաց Աբիսելիւ:»

«Հիւսիսային կողմի եղեալ տեղիքն զամէնն ասացաք յառաջագոյն, ի Դամասկոսէ սկսեալ մինչ ի սուրբ քաղաքն: Զի ցամաքային ճանապարհն սրբոյ քաղաքին՝ է հիւսիսային կողմն, բայց զոյ եւս տեղի իմն՝ որ ասի ազարակ Ագրիպպա՝ որ է մերձ քաղաքիս, իբր այր իմն, ուր ննջեաց Աբիմէլէք աշակերտն Երեմիա մարգարէին, ԿԼ (68) ամ» . . . (մնացեալն սրբագան պատմութիւն մինչեւ 87բ. տող 12: Էջ 87բ.—)

«Այսքան վասն շրջակայ տեղեաց սրբոյ քաղաքիս բաւականեսցի: Ուրեմն մտեալ այսուհետեւ ի յաստուածաշուրջ քաղաքն, ևւ պատմեսցուք համառօտակի զտեղեացն այնոցիկ՝ որք գտանին ի մէջ պարսպին, սրբոյ քաղաքին:» (Էջ 88ա տող 2):

(Շարունակելի) **Յ. ՔԻՒՐՏԵԱՆ**

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ

ՆՈՐԱԳԻԻՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿԵՐ

Արդ որպ. յառաջն ասացաք սրն. Ստեփաննոս կայր ի կաթողիկոստարանին և լուսաւորէր զամենեանն բանիւ վրդաութիւ իւրոյ. հանդիպեցաւ նմա հակաճառութիւ ընդդէմ Սմբատայ երկաբնակի, որ էր քսպարապետ հայոց և զաւանակից յունաց, զոր յետոյ, մհ. թլււին ի համանուն թռունէ սորա յայանեցաւ աղանդն Թոնգրիկեցոց, յաւուրս Դաթի կթղկսի. Կակաղեցոյ, ևւ ՚ի սոյն աւուրս բաժանեցան ՚ի հայոց ազգն Մող. ի ձեռն Փարսմանայ ումնն փառամով քննայի. որպ. պատմէ սրն. Ուխտանէս եպան. Սերաստիոյ:

Արդ այս Սմբատս ստտանայարարու՝ զիմափառ եղեալ սրբոյն Ստեփաննոսի և բազում տշխատութիւ. հասուցեալ սրբոյն ևւ ինքն անհաւանութեբ. մնացեալ, կամեցաւ սպանանել զսրն., զոր իմացեալ սրբոյն ևւ զաղտազնաց եղեալ ի կողմանս խաղտեաց, զազարի առ միայնաորի միում ուղղափառի, ընթեռնելով յարաժամ զգիրս ածայինս. լուեալ զայս երկտրնակն Սլմբատ Կուրապողոտ, ազգ առնէ կայսերն յունաց Լեոնի, եթէ հերձուածող ոմն Ստեփաննոս և հայհոյիչ թղրութեղ. քո, հալածեալ յինէն, է ՚ի կողմանս աշխարհիգ ձերոյ, բնակեալ առ այս անուն միայնաուրի: Յասուցեալ կայսրն ետ ածել զնա տագնապաւ ՚ի դուռն արքունի. բայց խրատեալ զնա միայնաուրն ասել թէ մուրական եմ ես ևւ անազգի, ևւ ի լսելն զայս կայսերն, քաղցրացոյց ած. զմիտս նր., և ոչ էարկ զնա ընդ չարչարանաւք. բայց ոչ թագոյց զճրագ հաւատոյ, այլ յայանեցաւ ճշմարտութիւ. նր. առաջի կայսերն և խաւսեցան վս. զաւանութե. հաւատոյ ընդ միմեանս: Իսկ ի հաւանել կայսերն, խնդրէ ի նմանէ սրն., բանալ առաջի իւր զարկեզս սրբոցն, որ եկիտ մատեանս մի ոսկետուփ, որ պատմէր զուղղափառութի. հաւատոյ, հաստատեալ յառաջինս սր. հր-

պացն. ի գլխաւորաց երկց սբ. ժողովոյն: Տարեալ զայն երանելին, մատոյց տառձի թգրին., զոր իբրեւ ընթերցու, հաճեալ հաւանեցաւ, եւ ասէ ցարն. երթ ի Հոռոմ հրովարտակաւք հրամանաց մերոց, առ պապն Ագարոս⁽¹⁾, եւ բեր ինձ երիս գիրս, համարարբառ յայսմ գրոց, զոր թէ կարես գտանել, յայնր⁽²⁾ գրենաց կրանս գարձուցանեմ զամ. աշխարհ: Երթեալ սրբոյն ի Հոռոմ եւ ըստ աջողելոյն այ. գտեալ երիս գիրս համադաւանս այնմ գրոց, կարգեալ եւ յաւերինեալ յԱթանասէ Աղեքսանդրացոյ, ի Կիւրղէ եւ յնպիփանայ, եւ իմացեալ հոգովն, եթէ ոչ առնէ կայսրն, զոր խոստացաւ: Անփոյթ արարեալ զհրաման ինքնակալին Լեոնի, ընդ այլ ճանապարհ գայ յեմ. ⁽³⁾ եւ զիմեալ ընդ Ասորիս, հասանէ ի Գուրին, եւ մատուցանէ զգրեանն առաջի տն. Գաւթի հպտի., զոր տեսեալ զուարճացաւ յոյժ, եւ սիրեալ զսրն. եւ պատուեալ ըստ անձին իւրում, ապտ տայ ի նո գամ. գործս հոգեւորս տան կթղկոսարանին.:

Յայնմ ժամանակի վախճան հասանէր երջանիկ եպսապետին. Սիւնեաց տն. Յոհանայ. եւ եկեալ առ կթղկոսն. իշխանքն Սիւնեաց Բարզեն եւ Քուրդիկ, խնդրեցին աթոռակալ իւրց. ի գրանէ հրպին., եւ տեսեալ զսրն. Ստեփաննոս հրամանակատար հրպին. եւ զահրէց ի վր. ամ. իշխանութեց. նր., տեղեկացեալ յոմանց եթէ ի Մաքենոցոց սբ. ուխտէն է, ապա աղաչանս արկեալ առաջի հրպին., զսրն. Ստեփաննոս խնդրէին ձեռնադրել յաթոռն Սիւնեաց: Արդ ոմանք ոչ զիտելով զստոյզըն, զԲարզեն իշխանս այս կարծեն զԲարզեն կաթողիկոսն, որ ծղ. ամաւ յառաջ էր քան զհայ թուականն, եւ Ստեփաննոս Սիւնեցին ի. ճՃԳ. թվկնին. էր, եւ է միջոց ժամանակացս միս. ամ. զիւրոյ ձեռնադրէր զսա Բարզեն, այնքան ժամանակաւ հետի էին ի միմեանց⁽⁴⁾: Այլ որպէս մեք կարացաք վրհասու. լինել ստուգութիւր.

այսպ. է, որպ. զրեցաք: Ընկալեալ կաթողիկոսին զհայցուածս նց., վերակոչէ զսրն. Ստեփաննոս յաթոռ եպսոութե. Սիւնեաց եւ վս. երախտեաց աշխատութե. նր., որ երբ զգրեանն ի Հոռոմայ եւ վս. արժանաւորութե. իւրոյ, երբեակ զաս եպսացն. հայոց կարգեաց զաթոռն Սիւնեաց. զի յառաջն յի երորդ գահին էին սիւնիք: Զի մեծ թգրն. հայոց Տրդատ եւ սբ. Լուսաւորիչն մեր զաշխարհ եւ զիշխանութի. իւրց. այնպ. սահմանեցին, որպ. տեսին ի հոռոմայեցոց իշխանութեն. կարգեալ ի մեծէն Կոստանդիանոսէ եւ ի սրբոյն Սեղբեսարոսէ: Մեծն Տրդատ կարգեաց. զ. զահրէէցս իւրոյ պաղատանն, զորս Բղեշխանուանեաց: Արեւելեան գրոսն իշխան Բղեշխն Գուգարացոց. իր. իշխանաւք. որ հարաւային գրանն՝ Անդեղ տունն. իր. իշխանաւք. արեւմտեանն գրանն՝ Կորդուցին՝ իա. իշխանաւք. հիւսիսային գրանն՝ Սիւնեցին՝ իա. իշխանաւք: Եւ զաւրք սոցս միահամուռ ճԻՌ., եւ. Զ. իշխանք զրեցան ի զահ նամակի նր., որք ի վր. ոսկի բարձի նստէին, առաջի արքայական աթոռոց նր.: Իսկ եթէ զկարգ զահնամակին կամիցիս զիտել, ցուցանեն քեզ պատմութիւն. Ագաթանգեղոսի, Ներսիսի եւ Գեոգի:

Այսպ. եւ սրն. Գրիգոր կարգեաց զահագլուխ եպսո. ԼԸ. ժթ. յաջմէ, եւ ժթ. յահեկէ, որք են այսոքիկ, յաջմէ. ա. Հարքայ. բ. Ոստան. գ. Տայոց. գ. Մարգողացի. ե. Արշամունեաց. գ. Արժրունեաց. է. Սիւեաց. ը. Ըսուշտունեաց. թ. Մոկաց. ժ. Երթարկայ(?). ժա. Ամատունեաց. ժբ. Գողթան. ժգ. Գարդմանա. ժդ. Ակելոյ. ժե. Բուժանեաց. ժզ. Ռոտակաց. ժէ. Արդոնյ. ժը. Զորրոգ հայոց. ժթ. Սա-

րից եւ Սրբէլեանից. որտեղ Սիւնեցու բերած երբ զրբրի եւ Գերմանոսի թղթի ընդունողը Բարզէն կաթողիկոսն է, որի ստուգութեան դէմ իրաւամբ վիճում է Միթարբ. «եւ եկեալ առ կաթողիկոսն Բարզէն եւ եցոյց նմա զթուրթն Գերմանոսի իսկ Բարզէն ձեռնադրեաց զիս եպս. առարելական աթոռոյն Սիւնեաց նահանկին» ։ Բարզէնի հրամանով էլ Սիւնեցին գրում է իւր պատասխանը: ...«Արար եւ շարականս զուագ օրհնութեներն(?) զէ. ժայնին. եւ վառին մնաց, որ տէր Ներսէս ասաց ի նոյն ոճ բանիցն» ։ Վերջին խօսքերից երևում է, որ խրմբագրուած է այն Ներսէս Շնորհալուց յետոյ: Այստեղ պակասում է Սիւնեցու եւ Սմբատ Բագրատունու հանդիպումը եւ ապա կայսեր հետ կապուած պատմութիւնն ու խօսակցութիւնը:

(1) Լեւոն Խաւրացու ժամանակակից պապերն էին Գրիգոր Բ. եւ Գրիգոր Գ.։ Ո՞րտեղից է առել Միթարբը այս սխալ տեղեկութիւնը, չգիտեմ:

(2) Զ-ում. չսմբ. (3) եմ.։

(4) Ամեն ինչ պատրաստ էր, գրուած, երբ առիթ ունեցանք թերթիւն Ե. Նախիջեւանի Ս. Լուսաւորիչ եկեղեցու ձեռագիր Յայտնաւորքը. երեւցաւ, որ կայ Սիւնեցու վկայարանութեան չորրորդ խմբագրութիւն, տարբեր «սկզբնականից», Միթար-

գաստանի: Իսկ յահեկէ կարգեցաւ. ա. Բա-
սնեոյ. բ. Մամիկոնեան. գ. Բագրեանդն.
դ. Բզնունեաց. ե. Բագրատունեաց. զ.
Խորխուռունեաց. է. Վանանդայ. ը. Ապա-
հունեաց. թ. Արշարունեաց. ժ. Գնունե-
աց. ժա. Անձաւացեաց. ժբ. Պալունեաց.
ժգ. Ասորեաց. ժդ. Մհհնունեաց. ժե. Է-
լիոյ. ժզ. Զարեանդա. ժէ. Եկեղեաց. ժը.
միւս ասորեաց. ժթ. Սպերոյ: Արդ այսու-
քիկ էին գլխաւոր գահակալքն, զոր կար-
գեաց սրն. Գրիգոր և հրամայեաց, եթէ
մի ոք իշխեսցէ փոխել զկարգ գահիս, զոր
ես սահմանեցի, և ընդ սքաւաք կարգեաց
եպսո., ն., և եթէ կամիցիս զիտել զգահ-
նամակի եպսոսն., ցուցանէ քեզ մեծն
Սամաէլ հայրն կարմընջաձորոյ:

Իսկ սրն. Ստեփաննոս առեալ զիշխա-
նութիւն. շրջէր ընդ. բժան. գաւառն Սիւն-
եաց, և ուրախ առնէր գնս. շնորհաւքն
Քի., քարոզել և ուսուցանելով ըստ խրա-
տուն Պաղտսի: Սա սկսաւ թարգմանել
զտեախին մեթոթի և ոչ կարաց կատարել
վս. կանխաժաման մահուան իւրոյ: Արդ
մինչդեռ դաւրէն ածեղէն. ճրագի լուսա-
ւորէր զհոգիս ամենեցուն, այլ և սուսեր
հոգեոր էր 'ի սատակումն ամբարըշտաց,
յեղեկեց. Զորի Մոզն գաւառի, կին մի
չնացող յանդիմանեալ ի նմանէ վս. յան-
ցանաց իւրոց, արբեալ ախտիւն յիմարու-
թե., զի ոգիք ըմբռնեալ ի մեղս ի մտաց
ևս անգանին: Առեալ ի գիշերի գհոմանին
իւր, գնաց ի սպանումն սրբոյն, և զի ա-
մառային էր ժամանակն և սրն ելեալ ար-
տաքս ի Մոզանէ՝ զվճանայր ի յորդարուխ
աղբերն, որ Աւագ ակն անուանի. ելեալ
յոստս ծառոյ միոյ ուռոյ ննջէր: Իսկ կինն
տուեալ զանակ ցհոմանին իւր, հանէ ի
ծառն, սպանանել զսրն.: Իսկ այրն ելեալ
ի ծառն, տեսանէ, զի շունչ սրբոյն, զի
զաւրէն լուսոյ ցորանայր յըրնկացն և
ճախր առնոյր զարձեալ ի նա: Եւ հրեշ-
տակք. բ. հրեղէն թեւաք հովանաւորէին
նմա, մի ի սնարից կողմանէ, և մի յա-
նտալից, զայն տեսալ, փութապէս, էջ ի
ծառոյն և պատմեաց կնոջն զողութր.:
Իսկ կինն շեռեալ տիրասպան խորհրդովն,
զարձեալ յորդորեաց զայրն, ելանել և ա-
ռանց զանգիտելոյ սպանել զսրն.: Գեր-
եալն ի պարողէն, ելեալ ետես ըստ ա-
ռաջին աւրինակին, և կարի վարհուրեալ

անկաւ սուրն ի ձեռաց նր. և ինքն անկաւ
ի ծառէն: Իրբեւ զիտաց կինն եթէ և ոչ
յայնմ նուազի հեղաւ(1) արիւն անրծին,
պախարակեալ զայրն, ինքն ելեալ ի ծառն
զգածեալ խորհրդով և խաւարեալ աչաւք,
էառ զգանակն, և խոխողեաց զսրն. ի
սրսկապանի իւրում. և հեղաւ արիւն նր.
զպատշգամաւքն և զճառովն. իսկ զհոգի
սրբոյն բարձեալ երկուց հրեշտակացն, վե-
բացան յերկինս, ակնյայտնի երեւմամբ:
Զոր տեսեալ միայնաւոր ոմն Նոյ անուն,
որ բազում ժամանակս ճգնէր ի լերիւնն
սբ. Սիոնի, զի զայր Ստեփաննոս և զզոզն
իւր վի արեամբ ունէր առաջի այ. ասելով.
Տես ար., զի քոյ ևն դատաստանք ար-
դար: Իսկ ի ժամ առաւուստին զիտացեալ
պաշտանէից նր. զիրսն որ գործեցան, ա-
ղաղակեալ, ազգ արարեալ գեղջէիցն. և
ամ. չուրջակայ գաւառին. բայց ոչ գիտա-
ցին եթէ յումմէ՞ գործեցաւ սպանութիւն.:
Ապա բարձեալ զպատուական մարմինն,
կամեցան հանել ի Սիոն լեռան. յորժամ
հասին ի գեղն Արկազնոյ, ընդ առաջ եղևն
ամ. բազմութիւ. մարդկան, և պրն. գեղջն,
որ էր աներ Բարդեսայ, և մեծաւ ողբով
ըսեացեալ ըստ պատշաճին, հաճեցին զմիտս
պաշտանէիցն, հանգուցանել զսրն. ի
սենեկին, որ շինեալ էր յանուն հպար
զինուորին Քի. սրբոյն Քրիստափորի, իսկ
նց. ունկնդիր եղեալ՝ կատարեցին զկամս
նց.: Ապա զայր հասանէր միայնաւորն Նոյ
ի սբ. Սիոնէ և փարէր զմարմնով երանե-
լոյն, և ազգ առնէր ժողովրդեանն զտե-
սիւն, որ ցուցաւ նմա ի գիշերին, և զգալ
բարկութեն. ի վերուստ. և ահա խաւար(2)
չաւ շափելի յանկարծակի պատեաց զՄոզն
և զամ. սահմանս երկրին, և զաւուրս քա-
ռասուն ոչ երեւէր տիւ և ոչ գիշեր. և վինէին
ստէպ ստէպ շարժմունք և ցուժունք հրոյ՝
և որոտմունք և բոց բարկութե. այ. և
հրացանութիւք. ընդ ամ. երկիրն եռային,
պատառէին վէմք, բեկանէին բլուրք, խո-
նարհէին լերինք, խնուին աղբիւրք, տա-
տանէին տունք, աւարէին ապարանք, կոր-
ծանեցան տունք ի վր. բնակչաց իւրեանց,
վա՛յ վայ՛ հանդիպէր և աղաղակ աղաղա-
կի, վս. որոյ և վոյոյ ձոր անուանեցաւ(3):
(Շար.) ԴԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՅՈՎՍԷՓԵԱՆԾ

(1) 2-ում. հեղո: (2) 2-ում. խօսք:
(3) անուանեցո: